ՔԼՈՐ-ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՈՏ ԵՎ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Թադևոսյան Ն.Ս.[1], Թադևոսյան Ա.Է.[2]

[1]Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի գիտահետազոտական կենտրոն, Երևան, Հայաստան

[2]Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի առողջապահության կազմակերպման և բժշկական իրավունքի ամբիոն, Երևան, Հայաստան

Հայտնի է, որ կանանց վերարտադրողական ֆունկցիան հատկապես զգայուն է շրջակա միջավայրի անբարենպաստ գործոնների ազդեցության նկատմամբ: Ապացուցված է, որ կայուն օրգանական աղտոտիչները (ԿՕԱ), որոնց թվին դասվում են քլորօրգանական թունաքիմիկատների (ՔՕԹ) մեծ մասը, կարող են թափանցել ընկերքային արգելքով՝ ազդելով հղիության ընթացքի ու ելքի վրա: Այդ իսկ պատճառով շրջակա միջավայրի աղտոտվածությունը ԿՕԱ-ով հանդիսանում է լուրջ էկոլոգիական խնդիր, որը սերտորեն առնչվում է առողջության հարցերի հետ և բազմակողմանի ուսումնասիրման կարիք ունի:

Իրականացված հետազոտությունները (2008-2010թթ.) ուղղված էին Աշտարակի շրջանի բնակիչների օրգանիզմում ՔՕԹ-ի պարունակության մակարդակների, վերարտադրողական առողջության ու նորածինների ֆիզիկական զարգացման որոշ ցուցանիշների վրա դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցության ուսումնասիրմանը:

Ստացված արդյունքները ցույց են տվել, որ ՔՕԹ-ի մակարդակները չեն նվազում և դրանք շարունակում են բարձր հաճախականությանբ հայտնաբերվել մարդու օրգանիզմում (կրծքի կաթում): Նկատվել է նմուշների թվի աճ (77%), որոնցում միաժամանակ հայտնաբերվել են մի քանի միացություններ (ԴԴՏ, ԴԴԵ, ՀՔՑՀ-իՄ-իզոմեր): Հարցման տվյալների համաձայն, ռեսպոնդենտների մի մասի մոտ (3-17%) ընթացիկ հղիությունն ու ծննդաբերությունը եղել են բարդություններով, մի խումբ ծննդկանների անամնեզում (7-17%) նշվել են նաև վերարտադրողական ֆունկցիայի տարբեր խանգարումներ (հղիության ակամա ընդհատում, վաղաժամ ծննդաբերություններ): Վերարտադրողական ֆունկցիայի խնդիրներ ունեցող ռեսպոնդենտների ընդհանուր թիվը տատանվել է 13-27% սահմաններում: Աշտարակի և Արտաշատի շրջանների կանանց կրծքի կաթի նմուշներում ՔՕԹ-ի պարունակության մակարդակների համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ հայտնաբերման հաճախականությունը, կոնցենտրացիաները, ինչպես նաև ՔՕԹ-ի գումարային մակարդակները Արտաշատի շրջանում հավաստիորեն եղել են ավելի բարձր:

Պաշտոնական վիճակագրական տվյալների (2010թ.) վերլուծությունը ցույց է տվել, որ ի համեմատ Աշտարակի շրջանի Արտաշատի շրջանում արձանագրվել է հղիության և ծննդաբերության ընթացքի բարդությունների մասին վկայող որոշ ցուցանիշների բարձրացում: Հարցման տվյալների համաձայն, Արտաշատի շրջանի ծննդկանների մոտ նկատվել է հղիության և ծննդաբերության բարդությունների, վերարտադրողական ֆունկցիայի խանգարումների բարձր հաճախականություն (53-63%), վիճակագրորեն հավաստի են եղել հարաբերության շանսերի մեծությունները: Բարդացած հղիության և ծննդաբերության ընթացք ունեցող ծննդկանների մոտ ՔՕԹ-ի պարունակությունը եղել է ավելի բարձր:

Ներկայացված արդյունքները կազմում են շրջակա միջավայրի որակի համալիր սոցիալ-հիգիենիկ, մոնիթորինգային ուսումնասիրությունների մաս, ինչը հետագայում Հայաստանում հիմք կհանդիսանա հիմնավորված առաջարկությունների մշակմանն ուղղված շրջակա միջավայրի կայուն միացություններով աղտոտման մակարդակների նվազեցմանն և ազգաբնակչության առողջության պահպանման հարցերի ամրապնդմանը:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY